



Համայնքների ֆինանսիստների միավորում  
Communities Finance Officers Association



«Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» ծրագիր  
“Civic Engagement in Local Governance” Program

# ՀՀ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ

Գիրք 1

## ՏԱՐԵԿԱՆ ԻՆԴԵՔՍ 2015 և 2016

ԵՐԵՎԱՆ 2017

2016

-0.16





Համայնքների  
ֆինանսիստների միավորում



# ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԵՎԱՆ ԻՆԴԵՔՍ (ՏԻՏԻ), ՀԱՅԱՍՏԱՆ

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մշակվել է ԱՄՆ ՄՁԳ «ՀամաՏեղ» ծրագրի շրջանակներում  
«Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի (ՀՖՄ) և  
«Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան»  
հիմնադրամի կողմից

ԵՐԵՎԱՆ  
  
«Վան Արյան»  
2017

*Սույն գիրքը հրատարակվել է Ամերիկայի ժողովրդի  
աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման  
գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) միջոցով:  
Այսպես արտահայտված տեսակետները միմիայն հեղինակներին  
են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ  
կառավարության տեսակետները:*

## **Հայաստանի տեղական ինքնակառավարման տարեկան գնահատման մեթոդաբանությունը մշակող փորձագիտական խումբը՝**

### **Տեղական ինքնակառավարման փորձագետներ՝**

Վահան Մովսիսյան (ՀՖՄ նախագահ)  
Աբրահամ Արտաշեսյան (ՀՖՄ փոխնախագահ)  
Վահրամ Շահբազյան (ՀՖՄ փորձագիտական խմբի ղեկավար)  
Վահագն Պետրոսյան (անկախ փորձագետ)  
Դավիթ Մարգարյան (ՀՖՄ փորձագետ)  
Քնարիկ Այվազովա (Արաբյան) (ՀՖՄ փորձագետ)  
Լևոն Թումանյան (ՀՖՄ փորձագետ)  
Ռուբեն Հայրապետյան (ՀՖՄ փորձագետ)  
Վահե Սարգսյան (ՀՖՄ փորձագետ)

### **ՀՌԿԿ-Հայաստանի մեթոդաբաններ՝**

Հեղինե Մանասյան (ՀՌԿԿ-Հայաստանի գործադիր տնօրեն)  
Սոնա Բալասանյան (ՀՌԿԿ-Հայաստանի հետազոտությունների գծով տնօրեն)  
Տիգրան Մաթոսյան (ՀՌԿԿ-Հայաստանի ավագ հետազոտող)

© ՀՖՄ, 2017

ISBN 978-9939-70-221-6

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ .....	4
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ .....	5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	6
ՏԻՏԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ .....	8
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՆԴԵՔՍԱԿՈՐՄԱՆ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՀԱՄԱՌՈՏ ԱՎՆԱՐԿ .....	9
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՆԴԵՔՍԱԿՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ .....	12
ՏԻՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒԼՔՆԵՐԸ .....	12
ՏԻՏԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈՂԸ .....	13
ՏԻՏԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ .....	14
ՀՀ ԵՒ ԵՄ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՆԱՆԵՐԻ ԵՒ ԱՅԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱԴՐԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍԿԶԲՈՒԼՔԸ .....	17
ՏԻՏԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒԼՔԸ .....	18
ԱՄՓՈՓՈՒՄ .....	19
ՀՂՈՒՄՆԵՐ .....	20
ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐ .....	22
ԱՂՅՈՒՄԱԿ 1 .....	23
ԱՂՅՈՒՄԱԿ 2. ՏԻՏԻ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ ՊԱՏՇԱՃ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 12 ՍԿԶԲՈՒԼՔՆԵՐԻՆ .....	28
ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐ 3-7. ՏԻՏԻ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՏԻ ԲՆԱԳԱԿԱՌՆԵՐԻ ԵՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ .....	38
ԱՂՅՈՒՄԱԿ 3Ա. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐ .....	38
ԱՂՅՈՒՄԱԿ 3Բ. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐ .....	41
ԱՂՅՈՒՄԱԿ 4Ա. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՒ ՖԻՆԱՆՍՆԵՐ .....	44
ԱՂՅՈՒՄԱԿ 4Բ. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՒ ՖԻՆԱՆՍՆԵՐ .....	50
ԱՂՅՈՒՄԱԿ 5. ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ .....	55
ԱՂՅՈՒՄԱԿ 6. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ .....	60
ԱՂՅՈՒՄԱԿ 7. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ (ՀԱՆՐԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ .....	63
ԱՂՅՈՒՄԱԿ 8. ՏԻՏԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՐԿՆ ԸՍՏ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱԿԱՌՆԵՐԻ, 2015Թ. ԵՒ 2016Թ. ....	70
ՀԱԿԵԼԿԱԾ 1. ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՒ ՊԱՏՇԱՃ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 12 ՍԿԶԲՈՒԼՔՆԵՐԸ .....	71
ՀԱԿԵԼԿԱԾ 2. ՏԻՏԻ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄՆԵՐԸ .....	75

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՄՆ ՄՁԳ	Ամերիկայի միացյալ նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԵՀՀ	Եվրասիա համագործակցություն հիմնադրամ
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՄԱ	Երևանի մամուլի ակումբ
ԺԱԱ	Գյումրու Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ
ԽՄ	Խորհրդակցական մարմին
ՀաՄաՏեղ	Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը
ՀԿ	Հասարական կազմակերպություն
ՀԿՏՀ	Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՌԿԿ	Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն
ՀՖՄ	Համայնքների ֆինանսիստների միավորում
ՄԱԿ	Միացյալ ազգերի կազմակերպություն
ՏԻ	Տեղական ինքնակառավարում
ՏԻՄ-եր	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏԻՏԻ	Տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքս
ՏԿԶՆ	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ՏՀԶՎԿ	Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն
ՅԱ	Յուրջի անվանումը
ՅԳ	Յուրջի գնահատականը
ՅՀՀ	Յուրջի հերթական համարը

## ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Հայաստանի ՏԻ տարեկան գնահատման (ՏԻ տարեկան ինդեքսի (ՏԻՏԻ-ի) հաշվարկման) մեթոդաբանությունը մշակվել է ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ՝ վեց կազմակերպությունների համընկերության կողմից իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը (Համասեղ)» հնգամյա ծրագրի շրջանակներում, որպես «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում» տարեկան զեկույցների մշակման մեթոդաբանությունը լրացնող փաստաթուղթ:

ՏԻՏԻ հաշվարկումը նպատակ ունի հնարավորինս համապարփակ գնահատել ՀՀ ՏԻ համակարգի տարեկան գործունեությունը՝ ՀՀ կենտրոնական կառավարությանը, ՏԻՄ-երին, քաղաքացիական հասարակությանը և այլ շահագրգիռ կողմերին տրամադրելով ՏԻ տարեկան գործունեության թվային գնահատական (ինդեքսի կամ համաթվի տեսքով):

ՀՀ ՏԻ տարեկան գնահատման մեթոդաբանությունը մշակելու համար ուսումնասիրվել է ՏԻ ինդեքսավորման միջազգային որոշակի փորձ՝ այն տեղայնացնելով և փոխառելով ՏԻ ինդեքսավորման մի շարք սկզբունքներ ու մոտեցումներ: Այդուհանդերձ, ՀՀ ՏԻՏԻ հաշվարկումը յուրահատուկ է հայաստանյան իրականության համար. այն հիմնվում է Հայաստանի ՏԻ փորձագետների կարծիքների ու տեսակետների, ինչպես նաև տեղեկատվական տարբեր աղբյուրներից փորձագետների ուսումնասիրած, վերլուծած և ներկայացրած օբյեկտիվ տվյալների վրա: Ի վերջո, ինդեքսը հաշվարկվել է փորձագիտական գնահատման մեթոդով:

ՏԻՏԻ-ն հաշվարկվել է փորձագիտական խմբի կողմից հաջորդական քայլերի գործընթացի իրականացման արդյունքում: ՀՀ ՏԻՏԻ հաշվարկը կատարվել է ըստ ՀՀ ՏԻ 5 ուղղությունների (բնագավառների), 20 գործառույթի, 12 սկզբունքի և 52 ցուցչի: Որպես ՏԻ տարեկան գնահատման հիմնական բնագավառներ՝ ընտրվել են ՏԻ գործունեության հետևյալ ընդհանրացված ուղղությունները.

1. տեղական ինքնակառավարման բարեփոխումներ,
2. համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ,
3. տեղական ժողովրդավարություն,
4. համայնքի կառավարում,
5. համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների մատուցում:

Մեթոդաբանությունում ներկայացված ՏԻՏԻ հաշվարկն իրականացվել է 2015 և 2016 թվականների համար՝ նպատակ ունենալով համեմատել և վերլուծել ՏԻ համակարգում այդ տարիներին կատարված փոփոխությունները և դրանց տրված գնահատականները:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՏԻ համակարգի վերլուծությունը, մոնիթորինգը և չափելի գնահատումը՝ կարևոր նշանակություն ունեն ոլորտի զարգացման հետագա քայլերը նախանշելու համար: Համակարգի վերլուծությունը ենթադրում է նաև դրա գնահատման մեթոդաբանության մշակում, ինչը բխում է ՏԻ բարեփոխումները ուսումնասիրելու և գնահատելու նպատակներից ու խնդիրներից:

ՏԻ համակարգի գնահատման, չափման կամ հետազոտման ունիվերսալ՝ բոլոր երկրների համար ընդունելի մեթոդաբանություն գոյություն չունի: ՏԻ համակարգի ուսումնասիրության եղանակներն ու մոտեցումները տարբեր են՝ կախված ուսումնասիրվող երկրի հանրային ոլորտի, սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային առանձնահատկություններից:

Սոցիալական հիմնախնդիրների ոլորտային ուսումնասիրության համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ հետազոտություններում հաճախ կիրառվում է այսպես կոչված «ինդեքսավորումը»: Ինդեքսների (համաթվերի) որոշումը մեր օրերում բավականին արդիական է դարձել և մեծ կարևորություն ունի հատկապես միջազգային համեմատությունների տեսանկյունից: Օրինակ, Freedom House-ի «Անցումային շրջանի երկրներ» զեկույցի տարբեր կատեգորիաների ցուցիչները և ամփոփ ինդեքսը<sup>2</sup> միտված են գնահատելու և վերլուծելու այդ երկրների ժողովրդավարության մակարդակի ընթացիկ վիճակը և փոփոխությունները: «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կայունության ինդեքսը»<sup>3</sup> գնահատում է տարբեր երկրներում քաղաքացիական հասարակության համար բարենպաստ միջավայրի առկայության վիճակը կամ խնդիրները: «Զանգվածային լրատվության միջոցների զարգացման կայունության ցուցիչը» (կամ «Մեդիա կայունության ինդեքսը»)<sup>4</sup> չափում է խոսքի ազատության մակարդակը, պրոֆեսիոնալ լրագրությունը, լրատվության աղբյուրների բազմազանությունը, բիզնեսի կառավարումը և աջակցող հաստատությունները: «Մարդու իրավունքների համընդհանուր ինդեքսը»<sup>5</sup> ցույց է տալիս տարբեր երկրներում մարդու քաղաքացիական և քաղաքական, տնտեսական և սոցիալական ու մշակութային իրավունքների հետ կապված հարցերում առկա իրավիճակը և դինամիկան: Լայն ճանաչում ունեն նաև «Խաղաղասիրության զլոբալ ինդեքսը»<sup>6</sup>, «Մարդկային զարգացման ինդեքսը»<sup>7</sup>, «Կոռուպցիայի ընկալման ինդեքսը»<sup>8</sup>, «Դատական բարեփոխումների ինդեքսը»<sup>9</sup> և այլն:

ՏԻ համակարգի ուսումնասիրության համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ հետազոտություններում ևս հաճախ կիրառվում է «ինդեքսավորումը»: Ինդեքսների (համաթվերի) օգտագործումը հնարավորություն է տալիս գնահատել/չափել ՏԻ համակարգի առանձին ուղղությունները՝ տվյալների հավաքագրման, ցուցիչների սահմանման, կշռման, գնահատման և վերջնական ինդեքսի հաշվարկման միջոցով:

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, Clarke and Dawson, 1999.

<sup>2</sup> <https://freedomhouse.org/report/nations-transit-methodology>

<sup>3</sup> <https://www.usaid.gov/what-we-do/democracy-human-rights-and-governance/cso-sustainability-index-methodology>

<sup>4</sup> <https://www.irex.org/sites/default/files/pdf/media-sustainability-index-2016-methodology-armenian.pdf>

<sup>5</sup> <http://www.ohchr.org/EN/Issues/Indicators/Pages/framework.aspx>

<sup>6</sup> <http://visionofhumanity.org/indexes/us-peace-index/>

<sup>7</sup> [http://hdr.undp.org/sites/default/files/2016\\_human\\_development\\_report.pdf](http://hdr.undp.org/sites/default/files/2016_human_development_report.pdf)

<sup>8</sup> [https://www.transparency.org/news/feature/corruption\\_perceptions\\_index\\_2016#resources](https://www.transparency.org/news/feature/corruption_perceptions_index_2016#resources)

<sup>9</sup> [https://www.americanbar.org/advocacy/rule\\_of\\_law/publications/assessments/jri.html](https://www.americanbar.org/advocacy/rule_of_law/publications/assessments/jri.html)

իրականացվող հետազոտության նպատակները հաճախ պայմանավորում են նաև ինդեքսի հաշվարկման օբյեկտը՝ առանձին համայնքները կամ ՏԻ ամբողջ համակարգը: Երկու դեպքում էլ ՏԻ ուսումնասիրությունը հիմնվում է ՏԻՄ-երի գործունեության որակական և քանակական ցուցանիշների վրա:

2002թ-ից սկսած՝ ՀՖՄ-ն մշտադիտարկում է ՀՀ ՏԻ համակարգի բարեփոխումները: Տարեցտարի հավաքագրված ու համակարգված տվյալներն այժմ արդեն հնարավոր են դարձրել ՏԻ տարեկան ինդեքսի հաշվարկումը և ՀՀ ՏԻ համակարգի զարգացման ավելի համապարփակ վերլուծությունն ու գնահատումը:

Հայաստանի ՏԻ տարեկան գնահատման սույն մեթոդաբանությունը մշակվել է ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը (ՀամաՏեղ)» հնգամյա ծրագրի շրջանակներում: Ծրագրի նպատակներից մեկը ՀՀ ՏԻ բնագավառի մշտադիտարկումը և ապակենտրոնացման ու ՏԻ բարեփոխումներում հանրային մասնակցության աստիճանի բարձրացումն է: Ծրագիրն իրականացվում է Հայաստանի տեղական կազմակերպությունների համընկերության<sup>10</sup> կողմից՝ ՏԻ բնագավառում մեծ փորձ ունեցող ՀՖՄ-ի առաջնորդությամբ:

ՏԻՏԻ հաշվարկումը հիմնվում է ՀՀ ՏԻ բնագավառի՝ տարեկան կտրվածքով համակարգային վերլուծության վրա՝ հիմքեր ստեղծելով համակարգում տարբեր տարիներին կատարված փոփոխությունները համեմատելու, ուսումնասիրելու և ՏԻ բնագավառում բարեփոխումների իրականացման վերաբերյալ առաջարկություններ մշակելու, դրանք պատկան մարմիններին ու հանրությանը ներկայացնելու համար:

---

<sup>10</sup> «ՀամաՏեղ» ծրագրի համընկերությունում գործընկեր կազմակերպություններն են՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ն, «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ն (ՏՀԶԿԿ), Երևանի մամուլի ակումբը (ԵՄԱ), Գյումրու Ժոռնալիստների «Ասպարեզ» ակումբը (ԺԱԱ), Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ) և ՀՌԿԿ-Հայաստանը:




## ՏԻՏԻ հաշվարկման նպատակները

ՏԻՏԻ հաշվարկումը հետապնդում է հետևյալ հիմնական նպատակները (Գծապատկեր 1)՝

- իրականացնել ՀՀ ՏԻ համակարգի տարեկան գործունեության համապարփակ և մեթոդական գնահատում,
- դասակարգել գնահատման արդյունքները՝ հիմնված ՏԻՄ-երի գործունեության առանձին բնագավառների ու գործառույթների գնահատումների վրա,
- տրամադրել ՀՀ կենտրոնական կառավարությանը, ՏԻՄ-երին, քաղաքացիական հասարակությանը և այլ շահագրգիռ կողմերին (այդ թվում՝ միջազգային և տեղական կազմակերպություններին ու փորձագետներին) ՀՀ ՏԻ համակարգի տարեց-տարի զարգացումների վերաբերյալ չափելի գնահատականներ:

### Գծապատկեր 1. ՏԻՏԻ հաշվարկման հիմնական նպատակները



## Տեղական ինքնակառավարման ինդեքսավորման միջազգային փորձի համառոտ ակնարկ

ՏՆ ինդեքսավորման միջազգային փորձը բազմազան է: Մեթոդաբանության այս մասում ներկայացվում են միջազգային փորձից մի քանի կարևոր օրինակներ:

ՏՆ ինդեքսավորման գործընթացները հիմնականում տարբերվում են՝ ըստ գնահատման հետևյալ երկու մոտեցումների.

- ինդեքսավորումը վերաբերում է ՏՆ առանձին մեկ կամ մի քանի միավորների, բնագավառների կամ խնդիրների (օրինակ՝ վստահությունը ՏՆՄ-երի նկատմամբ, ՏՆՄ-երի հաշվետվողականությունը և այլն),
- ինդեքսավորումը վերաբերում է ՏՆ ամբողջ համակարգի համապարփակ գնահատմանը:

ՏՆՄ-երի գործունեությունն՝ ըստ բնագավառների գնահատող ինդեքսավորման օրինակ է Ինդոնեզիայում կիրառվող ՏՆ ինդեքսը, իսկ համակարգային գնահատումով ինդեքսավորման օրինակ է ՏՆ բարոմետրը<sup>11</sup>:

Ինդեքսավորման նպատակով ՏՆ ցուցիչների վերաբերյալ տվյալների հավաքագրման, վերլուծության և ներկայացման եղանակները ևս շատ են: Հնարավոր է ինչպես որակական, այնպես էլ քանակական հետազոտական մեթոդների կիրառումը: Առավել կիրառելի որակական մեթոդներ են խորքային հարցազրույցները, ֆոկլոր խմբային քննարկումները և փորձագիտական գնահատումները: Քանակական տվյալները սովորաբար հավաքագրվում են զանգվածային հարցումների, վիճակագրական տեղեկատվական աղբյուրների տվյալների ուսումնասիրության միջոցով:

ՏՆ ինդեքսի հաշվարկման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման աղբյուրները բազմաթիվ են. պետական պաշտոնական տեղեկատվական աղբյուրներն, օրինակ, ընդգրկում են զարգացման ծրագրերն ու ռազմավարությունները, իրավական ակտերը, կատարողական հաշվետվությունները, հրապարակված փաստաթղթերը, ազգային վիճակագրական տվյալները և այլն:

Ինդեքսավորման հիմնական առանձնահատկությունն այն է, որ գնահատման տարբեր ցուցիչների արժեքները ի վերջո մեկտեղվում են մեկ թվային արժեքի՝ համաթվի ներքո: Համընդհանուր ընդունելի և կիրառելի ինդեքսների ստեղծումը բարդ է, քանի որ ինդեքսի վերջնական արժեքի ձևավորումը կախված է այն բանից, թե ինչպես են որոշակիացվում, կշռվում և համադրվում գնահատման մեթոդներն ու ցուցիչները:

Միևնույն ժամանակ, եթե ինդեքսավորումը ենթադրում է բարդ բանաձևեր ու հաշվարկներ, ապա քիչ հավանական է, որ ինդեքսավորման մեթոդաբանությունը (որպես հաջողված փորձ կամ օրինակ) տեղայնացվի և հաջողությամբ կիրառվի այլ երկրներում կամ գնահատման այլ ժամանակահատվածում ու միջավայրում:

Ֆիլիպիններում մշակված «Պատշաճ ինքնակառավարման ինդեքսը»<sup>12</sup>, օրինակ, ենթադրում է այնպիսի ցուցիչների սահմանում և գնահատում, որոնք խմբավորված են վարչական և տնտեսական թեմաների շրջանակներում: Ինդեքսը դասակարգում է երկրի ՏՆ ՑԻ միավորներն ըստ «լավ» կամ «վատ» կատարողականի: Հետաքրքիր է, որ, չնայած այս տեղեկատվության հրապարակմանը, ՏՆ միավորների ղեկավարները վերընտրվում

<sup>11</sup> Մշակվել է Պրոտորիայում, այնուհետև տեղայնացվել Աֆրիկայի և Հարավային Ամերիկայի մի շարք երկրներում՝ Բոտսվանայում, Հարավային Աֆրիկայում, Կամերունում, Էկվադորում, Գանայում, Մադագասկարում և Տանզանիայում, տե՛ս USAID, Bloom, Sunseri and Leonard, 2007, GSDRC, 2010):

<sup>12</sup> Good Governance Index, GGI, see Virola, Costo, Addawe and Reyes, 2004; Virola, Agtarap, Villanueva, and Villaruel, 2016.

էին նաև ՏԻ «վառ» կատարողական ունեցող միավորներում<sup>13</sup>: Այնուհետև, ՏԻ ինդեքսավորում իրականացնող կազմակերպությունները՝ Ֆիլիպինների ազգային վիճակագրության համակարգող խումբը և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը սկսեցին ակտիվորեն գործակցել զանգվածային լրատվամիջոցների հետ՝ բարձրացնելով հանրության տեղեկացվածության մակարդակը (Virola, 2006): Հավելենք նաև, որ Ֆիլիպիններում ՏԻ ինդեքսավորման փորձը ներառում է նաև ՏԻ ինքնագնահատման բաղադրիչ:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ՏԻ ինդեքսավորման ունիվերսալ մեթոդաբանությունները՝ նախատեսված լինելով ՏԻ բազմաթիվ ենթադրույթներ ուսումնասիրելու համար, չափման մեծ սխալ են պարունակում և չեն հանգեցնում կիրառելի, ազդեցիկ արդյունքների (UNDP 2009, p. 28): Ուստի, ՏԻ ինդեքսավորման մեթոդաբանությունների մշակման միջազգային փորձը հաշվի առնելը կարևոր նշանակություն ունի, սակայն տվյալ երկրի պահանջների ու առանձնահատկությունների հիման վրա մշակված մեթոդաբանությունների կիրառումը հանգեցնում է գնահատման առավել օբյեկտիվ ու հուսալի արդյունքների: Այսպես, ՏԻ բարոմետրի ունիվերսալ մեթոդաբանությունը տեղայնացվում է տվյալ երկրի ՏԻ համակարգի համար<sup>14</sup>: Միևնույն ժամանակ, ՏԻ բարոմետրի (LGB, 2007) տեղայնացումն ուրիշ երկրում ռեսուրսատար է, քանի որ վերջինիս հաշվարկման համար կիրառվում են որակական և քանակական տվյալների մի շարք աղբյուրներ: Միջազգային անկախ փորձագետներն առանձին երկրում ՏԻ բարոմետրի հաշվարկման համար համագործակցում են այդ երկրի ՏԻ շահառուների խմբերի հետ: ՏԻ բարոմետրը կիրառելի է քիչ հետազոտված տարածաշրջաններում, քանի որ այն որակական և քանակական մեթոդների օգնությամբ նպատակ ունի հետախուզել ու ախտորոշել ՏԻ համակարգի գործունեությունը:

Ֆիլիպինների ՏԻ համակարգի ուսումնասիրության համար 1999թ-ին մշակված «Ինքնակառավարումը տեղական զարգացման համար» ինդեքսը<sup>15</sup> (GOFORDEV) ժամանակի ընթացքում ձեռք է բերել կայուն և հավաստի տեղեկատվության հիման վրա ձևավորված հաշվարկման մեթոդաբանության համարում, սակայն այն հարմարեցված է միայն այս երկրի ՏԻ համակարգի ուսումնասիրության նպատակներին և նույնությամբ կիրառելի չէ այլ երկրների համար:

Ինդոնեզիայի «Կառավարման ռեֆորմների գործընկերություն Կեմիտրաան» կազմակերպությունը (Kemitraan Partnership) ՄԱԿ-ի աջակցությամբ մշակել է ՏԻ ինդեքս, որի նպատակը հավաստի, ախտորոշիչ տեղեկատվության ստացումը և ՏԻ ոլորտում հանրային մասնակցության խթանումն է: Ինդեքսավորման այս մեթոդաբանությունը լավ մշակված է և ենթադրում է անկախ փորձագիտական գնահատում:

<sup>13</sup> Հստ 2004թ-ին իրականացված հետազոտության տվյալների: Ընտրազանգվածի վարքագիծը ուսումնասիրելու համար Ֆիլիպինների ազգային վիճակագրական ծառայության նախաձեռնած մեկ այլ ուսումնասիրություն՝ ուղղված ընտրազանգվածի «գիտակից» լինելը չափելուն («ընտրազանգվածի ինդեքսի» հաշվարկմամբ), ցույց տվեց, որ ընտրողները չէին կատարում տեղեկացված ընտրություն:

<sup>14</sup> USAID, Bloom, Sunseri and Leonard, 2007.

<sup>15</sup> Stu` Capuno, Garcia and Sardala, 2001.

Աֆղանստանում մշակված «Պատշաճ ինքնակառավարումը տեղական զարգացման համար» ինդեքսը (GOFORGOOD, 2009) նպատակ ունի խթանելու հանրային մասնակցությունը ՏԻ-անը և նույնպես խիստ հարմարեցված է այդ երկրի ՏԻ համակարգին: Այն արտացոլում է երկրում ՏԻ առկա իրավիճակը և հետապնդում է դրա ախտորոշման և մշտադիտարկման նպատակ: Ինդեքսավորման նման մոդելը (ախտորոշիչ, մշտադիտարկող) խորհուրդ է տրվում կիրառել ՏԻ կայացող/զարգացող համակարգ ունեցող երկրներում (UNDP, 2009, p. 66):

ՏԻ ինդեքսավորման և հետազոտության միջազգային փորձի մասին առավել մանրամասն կարելի է ծանոթանալ ՄԱԿ-ի հրատարակությունից (UNDP, 2009), ինչպես նաև առանձին աղբյուրներից, որոնք ներկայացված են *Հղումների ցանկում*:

## Տեղական ինքնակառավարման ինդեքսավորումը Հայաստանում

### ՏԻՏԻ գնահատման ընդհանուր սկզբունքները

Հայաստանի համար ՏԻՏԻ մշակելու և հաշվարկելու համար փոխառնվել է ՏԻ բարոմետրի (LGB, 2007) ինդեքսավորման մեջ կիրառվող գնահատման սանդղակը՝ ցուցչի արժեքի տատանման միջակայք սահմանելով 0-ից 10-ը: Գնահատման 11 աստիճան ունեցող սանդղակի ընտրությունը հիմնավորված է «իմաստալից միջին» գնահատական, տվյալ դեպքում՝ հինգ (5), «միջին՝ ոչ լավ, ոչ վատ», ունենալու նպատակահարմարությամբ: Գնահատման 11-րդ աստիճանը, միևնույն ժամանակ, հնարավորություն է տալիս մանրակրկիտ հիմնավորելու ՏԻՏԻ ցուցիչների գնահատման չափանիշները (Գծապատկեր 2):

#### Գծապատկեր 2. ՏԻՏԻ գնահատման սանդղակը

0 = Գոյություն չունի
1 = Շատ վատ
2 = Վատ
3 = Բավականին վատ
4 = Ավելի շատ վատ, քան լավ
5 = Միջին՝ ոչ լավ, ոչ վատ
6 = Ավելի շատ լավ, քան վատ
7 = Բավականին լավ
8 = Լավ
9 = Շատ լավ
10 = Կատարյալ

ՏԻՏԻ-ն ունի ՀՀ ՏԻ համակարգը ախտորոշելու և մշտադիտարկելու նպատակ:

Հաշվի առնելով ՏԻ ինդեքսավորման միջազգային փորձը՝ ՏԻՏԻ-ն մշակվել է հատկապես Հայաստանի ՏԻ համակարգի հետազոտության և վերլուծության համար: Տեղայնացվել են ՏԻ ինդեքսավորման միջազգային փորձում առկա տրամաբանական հիմնական սկզբունքները, սակայն բնութագրիչ ցուցիչները և դրանց գնահատման չափանիշները հիմնովին տարբեր են և համապատասխանում են ՏԻ հայաստանյան իրականությանը: Վերջիններս մեծապես հիմնված են ՀՖՄ կողմից տարիներ ի վեր իրականացվող ՏԻ համակարգային մշտադիտարկումների տվյալների ու փորձագիտական առկա գիտելիքի վրա:

ՏԻՏԻ հաշվարկման ընդհանուր տրամաբանությունը հիմնվում է Ինդոնեզիայում ՏԻ ինդեքսավորման սկզբունքների վրա (տե՛ս Gismar, 2009; Kemitraan Partnership): Եթե Ինդոնեզիայում ՏԻ ինդեքսը հաշվարկվում է՝ ըստ ՏԻ 4 բնագավառի (ոլորտի), 8 գործառույթի, 6 սկզբունքի և 75 ցուցչի, ապա հայաստանյան ՏԻՏԻ-ն հիմնվում է ՏԻ 5 բնագավառի, 20 գործառույթի և 52 ցուցչի գնահատման վրա: Ցուցիչներն ընտրվել են՝ հիմք ընդունելով Տեղական մակարդակում նորարարության և պատշաճ ժողովրդավարական կառավարման 12 սկզբունքները (տե՛ս Հավելված 1) և ստուգելով ցուցիչների համապատասխանությունն այդ սկզբունքներին: Եթե Ինդոնեզիայի ինդեքսավորումը կիրառում է 1-10 աստիճանով գնահատման սանդղակ, ապա ՏԻՏԻ-ն կիրառում է 0-10 գնահատման սանդղակը՝ օգտվելով ՏԻ բարոմետրի սանդղակավորման ընթացակարգից:

հնդունեցիայում ինդեքսավորումը գնահատում է բոլոր ՏԻ միավորներն առանձին-առանձին, մինչդեռ առաջարկվող ՏԻՏԻ-ն գնահատում է ՀՀ ՏԻ ամբողջ համակարգը՝ ըստ ցուցիչների տարեկան արժեքների:

Եթե ՏԻՏԻ հաշվարկման մեթոդաբանության մեջ տեղայնացվում է ՏԻ բարոմետրի համակարգային ընդհանուր մոտեցումը և գնահատման սանդղակավորման հիմնական ընթացակարգը (11 աստիճան՝ 0-10), ապա ՏԻ ինդեքսավորման ընթացքում գնահատման և ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունն իր տրամաբանությամբ ավելի մոտ է հնդունեցիայի ինդեքսավորման մեթոդաբանությանը (UNDP, 2009, p. 81): Այդուհանդերձ, ՀՀ ՏԻՏԻ-ն յուրահատուկ է իր հաշվարկման մեթոդաբանությամբ և կիրառման ենթատեքստով, քանի որ համապատասխանեցված է հայաստանյան իրականությանը և մշակվել է՝ հաշվի առնելով ՀՀ ՏԻ համակարգի առանձնահատկությունները:

ՀՀ ՏԻ ինդեքսավորման մեջ կիրառված գնահատումները թե՛ որակական են, թե՛ քանակական. դրանք կատարվել են ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ աղբյուրներից ստացված տվյալների հիման վրա: Սուբյեկտիվ տվյալները ստացվել են հանրային ընկալումներին վերաբերող հարցումների, փորձագիտական վերլուծությունների, կարծիքների ու գնահատումների հիման վրա: Օբյեկտիվ տվյալների աղբյուր են հանդիսացել ՀՀ պաշտոնական վիճակագրական տվյալները, հաշվետվությունները, բյուջետային ամփոփ տվյալները, ՏԻ բնագավառի ՀՀ օրենսդրությունը, պաշտոնական համացանցային կայքերը, հրապարակային զեկույցները և այլն: Այդ տվյալներն իրենց ողջ ծավալով հիմնականում արտացոլված են ՀՖՄ-ի՝ ՀՀ ՏԻ համակարգի մշտադիտարկման ամենամյա զեկույց հրապարակումներում (<ՖՄ, 2004; 2008; 2009; 2011; 2012; 2015ա; 2015բ; 2016):

Որպես տեղեկատվության աղբյուր՝ հատուկ ուշադրություն է դարձվել ՏԻ-անը վերաբերող միջազգային գրականությանը (հոդվածներ, զեկույցներ, տվյալադարաններ կամ տվյալների շտեմարաններ, վիճակագրական տվյալներ և այլն): Ցուցիչների գնահատման չափանիշները հիմնականում հիմնվել են մեթոդապես հիմնարար գրականության և առկա (փորձագիտական) մոտեցումների վրա:

## **ՏԻՏԻ փորձագիտական գնահատման մեթոդը**

ՏԻՏԻ-ն, թեև հիմնվում է տեղեկատվական բազմազան օբյեկտիվ և սուբյեկտիվ աղբյուրների վրա, ի վերջո ձևավորվում է փորձագիտական միջամտությամբ և մեթոդապես հիմնավորված գնահատմամբ: ՏԻ բնագավառի փորձագետները, օգտագործելով ստացված տվյալները և հիմնվելով գնահատման ընտրված մեթոդի վրա, իրականացնում են ՀՀ ՏԻ համակարգի ինդեքսավորումը:

Տեղին է հիշեցնել, որ ինդեքսավորման փորձագիտական մեթոդը շարունակում է ընդունված մնալ այլ երկրների ՏԻ ինդեքսավորման գործընթացներում (տե՛ս UNDP, 2009, p. 36-39) և կիրառելի է այն դեպքերում, երբ կարևորվում է իրականացված գնահատման արդյունքների օգտագործումը քաղաքականություն մշակողների և իրականացնողների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից: Փորձագիտական գնահատման մեթոդը թույլ է տալիս խնայել ժամանակը և ֆինանսական ռեսուրսները: Այն ապահովում է փաստարկված ու հիմնավորված գնահատում, որն իրականացնում են ՏԻ բնագավառի փորձառու մասնագետները:

ՏԻ փորձագետների կողմից ցուցիչների գնահատումները առավելապես հիմնվում են հստակ մոտեցումների ու չափումների, օբյեկտիվ տեղեկատվության և հիմնավորված մեթոդների վրա, այնպես, որ այլ փորձագետներ, փորձագիտական խմբեր կամ ՀՀ ՏԻ բնագավառի պատկան մարմինների ներկայացուցիչներ՝ օգտագործելով գնահատման

նույն չափանիշները, կարողանան հետագա տարիներին իրականացնել ցուցիչների նույնանման գնահատումներ:

ՏՏՏ հաշվարկման ներկա փուլում ընտրված փորձագիտական գնահատման մեթոդով (Wholey et al., 2013, pp. 292-294) գնահատմանը մասնակցել է ՏԻ ինը փորձագետ (*տե՛ս ՏՏՏ-ն մշակող փորձագիտական խումբը*):

Հետագա տարիների ՏՏՏ հաշվարկման ընթացքում, հնարավոր է, ՏՏՏ ցուցիչները և դրանց գնահատման չափանիշները պարզեցվեն, լրացվեն և (կամ) վերաձևակերպվեն որպես հարցաթերթային հարցման ցուցիչներ՝ հնարավորություն տալով իրականացնել առավել լայնածավալ գնահատումներ շահառուների կամ հանրության շրջանում: Չի բացառվում նաև, որ գնահատող փորձագիտական խմբի կազմը փոփոխվի կամ ընդլայնվի, որպեսզի շարունակվեն մեթոդաբանության տեղայնացման, հարմարեցման և զարգացման աշխատանքները:

### ՏՏՏ հաշվարկման գործընթացը


ՏԻ 52 ցուցիչների բաշխումն, ըստ ՏԻ 5 բնագավառների և 20 գործառույթների, ներկայացված է *Սղոսակ 1-ում*: Ցուցիչների թիվը ՏԻ տարբեր գործառույթների համար տարբեր է: Յուրաքանչյուր գործառույթի համար սահմանվել է առնվազն մեկ ցուցիչ: ՏԻ 20 գործառույթից 3-ի («Համայնքի զարգացման ծրագրեր և բյուջե»), «Միջազգային աջակցություն» և «Համայնքային այլ ծառայություններ») համար ցուցիչներ առայժմ չեն սահմանվել և այդ գործառույթների գնահատում չի իրականացվել 2015թ. և 2016թ. համար: Այդուհանդերձ, այդ 3 գործառույթները ցուցակագրված են և դրանց համար պլանավորվում է ցուցիչներ սահմանել ՏՏՏ հաշվարկման հետագա տարիներին:

Մինչույն ժամանակ, «ՏԻ բարեփոխումներ» բնագավառի «Միջհամայնքային համագործակցություն» գործառույթի «Կամավոր հիմունքներով ձևավորված միջհամայնքային միավորումների կազմում ընդգրկված համայնքների միջին թիվը» և «Օրենքով ձևավորված միջհամայնքային միավորումների կազմում ընդգրկված համայնքների միջին թիվը» ցուցիչների համար դեռևս չեն սահմանվել գնահատման չափանիշներ, քանի որ դրանց սահմանումը մեծապես կախված է ինչպես ՀՀ վարչատարածքային հետագա բարեփոխումներից, այնպես էլ համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորումից և վերջինիս ուժի մեջ մտնելուց: 2015 և 2016 թվականների ընթացքում միջհամայնքային միավորումների վերաբերյալ համապատասխան իրավական ակտեր չեն ընդունվել, հետևաբար այս տարիներին միջհամայնքային միավորումներ չեն ձևավորվել: Միջհամայնքային միավորումների մասին իրավական ակտի ընդունումից հետո արդեն հնարավոր կլինի հստակորեն ձևակերպել այդ ցուցիչների գնահատման չափանիշների սանդղակը և համապատասխան հիմնավորումները:

Ընդհանուր առմամբ՝ ՏԻ ամեն մի գործառույթի համար սահմանվող ցուցիչների քանակը կախված է ՀՀ ՏԻ բնագավառում լուծման կարիք ունեցող հրատապ և գերակա խնդիրներից: ՏԻ խնդիրները կարևորվում են՝ ըստ դրանց լուծումներին ուղղորդված (անզլ.՝ solution-oriented) լինելու ներուժի: Այսինքն՝ հիմնարար է այն գաղափարը, որ **ՀՀ համայնքներում առկա հրատապ խնդիրներին պետք է տրվեն լուծումներ, և լավագույնն է այն ՏԻ համակարգը, որը կարողանում է լուծել այդ խնդիրները և բնակիչներին մատուցել պատշաճ որակի հանրային ծառայություններ:**

ՏՏՏ հաշվարկումն իրենից ներկայացնում է հետևյալ հինգ հաջորդական քայլերից բաղկացած գործընթացի իրականացման արդյունքը (Գծապատկեր 3).

### Գծապատկեր 3. ՏԻՏԻ հաշվարկման գործընթացը



#### Քայլ 1. ՏԻ բնագավառների, գործառույթների ու ցուցիչների սահմանում

Նախ և առաջ, սահմանվել են ՏԻ համակարգի հիմնական բնագավառները՝ օգտվելով ՏԻ ինդեքսավորման միջազգային փորձից (Gismar, 2009; UNDP, 2009, p. 81; LGB, 2007), ինչպես նաև հաշվի առնելով ՀՖՄ տարեկան զեկույցների մշակման մեթոդաբանությունը և կառուցվածքային տրամաբանությունը: Որպես ՏԻ տարեկան գնահատման հիմնական բնագավառներ համարվել են ՏԻ ընդհանրացված հետևյալ ուղղությունները.

- ՏԻ բարեփոխումներ,
- համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ,
- տեղական ժողովրդավարություն,
- համայնքի կառավարում,
- համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների մատուցում:

Այնուհետև, ՏԻ յուրաքանչյուր բնագավառի համար սահմանվել են այդ բնագավառին բնորոշ հիմնական գործառույթները և ցուցիչները (*տե՛ս Աղյուսակ 1*):

#### Քայլ 2. ՏԻ ընտրված սկզբունքներին ցուցիչների համապատասխանության ստուգում

Դիտարկվել և ստուգվել է յուրաքանչյուր ցուցիչի համապատասխանությունը տեղական մակարդակում նորարարության և պատշաճ ժողովրդավարական կառավարման 12 սկզբունքներին (CoE, 2008, *Հավելված 1*): Սրանով ՏԻՏԻ հաշվարկման փորձագիտական թիմը ցույց է տվել, թե յուրաքանչյուր ցուցիչ որքանով է համապատասխանում վերոնշյալ սկզբունքներից յուրաքանչյուրին (*տե՛ս Աղյուսակ 2*): Ընդ որում, ՏԻՏԻ հաշվարկման այս փուլում սկզբունքներին ցուցիչների համապատասխանության ստուգման համար միայն մատնանշվել է՝ «համապատասխանում է» կամ «չի համապատասխանում», առանց որևէ թվային արժեք տալու: Բանը նրանում է, որ առաջին անգամ ՏԻՏԻ հաշվարկման ժամանակ անհրաժեշտ էր միայն որոշակիացնել, թե որ ցուցիչներն





**Քայլ 3. Ցուցիչների գնահատման չափանիշների սահմանում և հիմնավորում**

ՏԻՏԻ հաշվարկման ամենաբարդ փուլը ցուցիչների գնահատման չափանիշների սահմանումն է 11 աստիճան սանդղակով. յուրաքանչյուր ցուցչի գնահատման չափանիշները հարկավոր է հստակորեն ձևակերպել ու հիմնավորել: Հատկապես կարևոր է ցուցիչների գնահատման չափանիշների սահմանմանը կից համապատասխան հիմնավորումների և մեկնաբանությունների ներկայացումը: Սահմանված բոլոր ցուցիչների գնահատման չափանիշները և դրանց հիմնավորումները ներկայացված են *Աղյուսակներ 3-ից 7-ում*:

Ցուցիչների գնահատման համար առանցքային նշանակություն ունի գնահատման սանդղակի հատկապես ստորին և վերին շեմերի սահմանումը, որոնց միջակայքում էլ ցուցիչները պետք է գնահատվեն և ստանան համապատասխան արժեքներ կամ գնահատականներ: Ուստի, ցուցիչների գնահատման մեթոդաբանական մոտեցումների մշակմանը զուգահեռ, ՏԻ փորձագետների առջև խնդիր դրվեց յուրաքանչյուր ցուցչի համար սահմանել դրա արժեքի առավելագույն շեմը: Վերջինս պետք է սահմանվեր այնպես, որպեսզի 10 գնահատականն արտահայտեր այն հնարավոր ու ցանկալի նպատակը կամ արդյունքը (կարելի է ասել նաև՝ տեսլականը), որին ձգտում ենք հասցնել ՀՀ ՏԻ համակարգը՝ տվյալ դեպքում դիտարկելով միայն տվյալ ցուցչի արժեքը: Այդ իսկ պատճառով, ՏԻՏԻ հաշվարկումն իրականացնող փորձագիտական խմբի կողմից քննարկված և ի վերջո ընտրված յուրաքանչյուր ցուցչի համար սահմանվեց վերին կամ ցանկալիկատարյալ արժեքի շեմ՝ համապատասխան մեթոդաբանական հիմնավորումներով: ՏԻՏԻ որոշ ցուցիչների գնահատման չափանիշների սանդղակի վերին աստիճանի (10=«կատարյալ») ընտրության հիմնավորումները ներկայացվում են *Հավելված 2-ում*:

Փորձագիտական խումբը ձգտել է գնահատման չափանիշները հնարավորինս չափելի դարձնել: Ցուցիչներից մի քանիսի համար ծագեց նաև դրանք եվրոպական երկրների համանման ցուցանիշների հետ համադրելի դարձնելու խնդիրը, որի լուծման հատուկ մեթոդաբանական մոտեցումը ներկայացվում է ստորև՝ հաջորդ ենթաբաժնում:

**Քայլ 4. Ցուցիչների գնահատումը**

Ցուցիչների գնահատման տեղեկատվական աղբյուրները բազմակողմ և խիստ բազմազան են եղել: Այսպես, համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական գնահատման վրա հիմնվել են ընդամենը 5 ցուցիչներ՝ «ՏԻ բարեփոխումներ» բնագավառի «Բարեփոխումների իրավական և ծրագրային գնահատում» գործառույթի 4 ցուցիչները և «Արտաքին պարտավորությունների կատարում» գործառույթի 1 ցուցիչը: Մնացած 47 ցուցիչների գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության հստակ աղբյուրներ են ծառայել ինչպես Հայաստանի, այնպես էլ Եվրամիության անդամ երկրների պաշտոնական վիճակագրական տվյալները, ամփոփ բյուջետային տվյալները և այլն:

Հայաստանի ՏԻ տարեկան գնահատման արդյունքները 2015 և 2016 թվականների համար՝ ըստ 52 ցուցիչների, մանրամասն ներկայացված են *Աղյուսակներ 3-ից 7-ում*:

## Քայլ 5. Գնահատված ցուցիչների արժեքների միջինացում

ՏԻ տարեկան գնահատման վերջին փուլում, հիմնվելով ցուցիչների առանձին գնահատականների վրա, թվաբանական միջինի կիրառմամբ, հաշվարկվել է ՀՀ ՏԻՏԻ-ն 2015 և 2016 թվականների համար (*տե՛ս Աղյուսակ 8*):

Ցուցիչների վերջնական գնահատումից երևում է, որ 2015 և 2016 թթ. համար ՏԻ 5 բնագավառներում առանձնացված գործառույթների ու ցուցիչների քանակները տարբերվում են: Այսպես, այս փուլում առավել շատ թվով ցուցիչներ են սահմանվել հատկապես «Համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ» բնագավառի համար: Գնահատման այս դրվածքը, սակայն, կարող է հետագայում փոխվել՝ կապված այլ բնագավառներում այլ գործառույթների ու ցուցիչների որոշակիացման և սահմանման հետ:

## ՀՀ և ԵՄ անդամ երկրների ՀՆԱ-ների և այլ ցուցանիշների համադրելիության ապահովման սկզբունքը

ՏԻՏԻ ցուցիչների գնահատման չափանիշները սահմանելիս կարևոր էր նաև մշակել մոտեցումներ, որոնք հնարավոր կդարձնեին ՀՀ և ԵՄ անդամ երկրների ՀՆԱ-ների և այլ ցուցանիշների համադրումը, և ըստ այդմ՝ ՏԻՏԻ ցուցիչների և ինդեքսների համեմատելիությունը: Այս սկզբունքը պարզաբանենք կոնկրետ՝ 2016թ-ի օրինակով:

Ըստ Համաշխարհային բանկի տվյալների՝ 2016թ-ին Հայաստանի և ԵՄ անդամ երկրների մեկ շնչի հաշվով անվանական ՀՆԱ-ն (ընթացիկ գներով) միջինում համապատասխանաբար կազմել են 3606 ԱՄՆ դոլար և 32 059 ԱՄՆ դոլար<sup>16</sup>:

ԵՄ անդամ երկրների և ՀՀ տնտեսական զարգացվածության ազգային հաշիվների միջև առկա տարբերությունը հաշվի առնելու, ՀՀ-ն և ԵՄ անդամ երկրները քննարկվող ցուցանիշների առումով համադրելի մակարդակի բերելու նպատակով՝ ֆինանսական և ազգային հաշիվների համակարգի ցուցանիշները դիտարկելիս, ԵՄ անդամ երկրների նույնանուն ցուցանիշի միջին արժեքը նվազեցվել է մինչև ՀՀ և ԵՄ անդամ երկրների մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ների թվերի հարաբերակցությունը՝ սկզբնական թվի նկատմամբ (տոկոսներով): Մասնավորապես, 2016թ-ի համար մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն Հայաստանում կազմել է ԵՄ անդամ երկրների մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ների միջինի մոտ 11.25 տոկոսը՝

$$\frac{\$ 3\ 606 \text{ (ՀՀ մեկ շնչի հաշվով ՀՆԱ)}}{\$ 32\ 059 \text{ (ԵՄ երկրներում մեկ շնչի հաշվով ՀՆԱ)}} \times 100\% = 11.25\%$$

Հետևաբար, ԵՄ անդամ երկրների ազգային հաշիվների ցուցանիշները դիտարկելիս, դրանք, ՀՀ ցուցանիշների հետ համադրելի դարձնելու նպատակով, նվազեցվել են մինչև դրանց սկզբնական արժեքների **11.25%-ը**:

Նկարագրված մեթոդաբանության կիրառմամբ՝ փորձ է արվել միևնույն մակարդակի բերել ԵՄ անդամ երկրների և ՀՀ տնտեսական զարգացվածության տարբեր մակարդակները, սահմանված ցուցիչները հնարավորինս համադրելի դարձնելով ԵՄ անդամ երկրների նույնանուն ցուցիչների հետ:

<sup>16</sup>Տե՛ս <http://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=AM-EU>

## **ՏԻՏԻ հաշվարկման արդյունքը**

Ցուցիչների գնահատականների թվաբանական միջինացումը ցույց տվեց, որ 2015թ-ի ՏԻՏԻ-ն 0-10 սանդղակում կազմել է 4.40 միավոր/բալլ, այսինքն՝ ստացել է «Ավելի շուտ վատ, քան լավ» գնահատական, իսկ 2016թ-ին՝ 4.24 միավոր/բալլ, այսինքն նույն՝ «Ավելի շուտ վատ, քան լավ» գնահատականը: Համաթվի փոքր-ինչ անկումը հիմնականում կապված է եղել «Համայնքի կառավարում» բնագավառի միջինացված գնահատականի հետ, որը 2016թ. համար գնահատվել է 4.8 միավոր/բալլ՝ 2015թ. 5.8-ի դիմաց (*տե՛ս Աղյուսակ 8*):

## ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն մեթոդաբանության մեջ ՏԻ ինդեքսավորման միջազգային փորձի հիման վրա մանրամասնորեն ներկայացվեցին ՀՀ ՏԻ տարեկան ինդեքսի (ՏԻՏԻ) հաշվարկման մեթոդաբանական մոտեցումները, սկզբունքները և փորձագիտական հիմնավորումները՝ արտացոլելով ՀՀ ՏԻ տարեկան գործունեության համակարգային վերլուծությունը: Հաշվի առնելով ՏԻՏԻ հաշվարկման ներկայացված մեթոդաբանական մոտեցումներն ու ուղղությունները՝ պարզ դարձավ, որ ՏԻՏԻ հաշվարկումը ինդեքսավորման միջազգային համապատասխան փորձի վերլուծման և տեղայնացման աշխատատար գործընթաց է: Միևնույն ժամանակ, այն որոշակիորեն արտահայտում է հայաստանյան իրականությունը: ՏԻ տարեկան գնահատման համար սահմանված բնագավառները, գործառույթները և ցուցիչները բավարար չափով արտահայտում են ՀՀ ՏԻ հրատապ և գերակա խնդիրները:

Մեթոդաբանության մեջ ներկայացվեց ՏԻՏԻ հաշվարկման՝ փորձագիտական խմբի կողմից իրականացված հաջորդական քայլերի գործընթացը.

- ՏԻ բնագավառների, գործառույթների և ցուցիչների սահմանում,
- ցուցիչների համապատասխանության ստուգում ընտրված սկզբունքներին,
- ցուցիչների գնահատման չափանիշների սահմանում և հիմնավորում,
- ցուցիչների գնահատում,
- գնահատված ցուցիչների արժեքների միջինացում՝ ըստ ՏԻ գործառույթների և բնագավառների:

Մեթոդաբանության մեջ հստակորեն նշվեց, որ ՏԻՏԻ-ի ամենամյա հաշվարկն ունի ՏԻ համակարգի ախտորոշման և մշտադիտարկման նպատակ: ՏԻՏԻ հաշվարկման առաջարկվող մոտեցումը հնարավորություն է տալիս ախտորոշել ՀՀ ՏԻ համակարգում առկա խնդիրները և բացերը՝ դրանք համակարգված կերպով ըմբռնելու և ուղղորդված քաղաքականությամբ դրանց համապատասխան լուծումները գտնելու միտումով:

Մասնավորապես, մեթոդաբանությունում նկարագրված ՏԻՏԻ հաշվարկումը կոնկրետ 2015 և 2016 թվականների համար հնարավորություն է տալիս համեմատել և վերլուծել այդ տարիներին ՀՀ ՏԻ համակարգում կատարված փոփոխությունները և տրված գնահատականները՝ ՀՀ ՏԻ հետագա բարեփոխումների վերաբերյալ համապատասխան եզրակացություններ ու առաջարկություններ ներկայացնելու համար:

## ՀՂՈՒՄՆԵՐ

1. ՀՖՄ, Թումանյան Դավիթ. (խմբ., 2008) Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2004-2006), Երևան, Նոյյան Տապան:
2. ՀՖՄ, Թումանյան Դավիթ. (խմբ., 2009) Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2007-2008), Երևան, Նոյյան Տապան:
3. ՀՖՄ, Թումանյան Դավիթ. (խմբ., 2011) Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2009-2010), Երևան, Նոյյան Տապան:
4. ՀՖՄ, Թումանյան Դավիթ. (խմբ., 2009) Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2007-2008), Երևան, Նոյյան Տապան:
5. ՀՖՄ, Թումանյան Դավիթ. (խմբ., 2012) Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2011), Երևան, Նոյյան Տապան:
6. ՀՖՄ, Թումանյան Դավիթ. (խմբ., 2015ա) Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2012-2013), Երևան, Վան Արյան:
7. ՀՖՄ, Թումանյան Դավիթ. (խմբ., 2015բ) Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2014), Երևան, Վան Արյան:
8. ՀՖՄ, Թումանյան Դավիթ. (խմբ., 2016) Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2015թ.), Երևան, Վան Արյան:
9. Capuno J. J., Garcia M. M. S. and J. S. Sardalla (2001) “Tracking Good Governance and Local Development: Is the GOFORDEV Index a Valid Measure?” [Online]. Available from:  
[http://c.ymcdn.com/sites/www.istr.org/resource/resmgr/working\\_papers\\_cape\\_town/capuno.pdf?hhSearchTerms=](http://c.ymcdn.com/sites/www.istr.org/resource/resmgr/working_papers_cape_town/capuno.pdf?hhSearchTerms=) [Accessed 14.04.2017].
10. CELoG (2017) “Civic Engagement in Local Governance” [Online] Available from:  
<http://celog.am/en> [Accessed 14.04.2017].
11. Clarke, A., & Dawson, R. (1999). Evaluation research: An introduction to principles, methods, and practice. London; Thousand Oaks, Calif.: SAGE.
12. CoE, Committee of Ministers, The Strategy for Innovation and Good Governance at local Level. March 2008. [Online] Available from:  
<http://www.osce.org/eea/86380?download=true> [Accessed 20.07.2017].
13. CRRRC (2015) Enhancing Citizens’ Participation in Local Self-government and Decentralization (CELoG) Survey Outputs [Online] Available from:  
<http://www.crrc.am/research-and-surveys/ongoing-projects/442-ongoing-projects/CELoG?lang=en> [Accessed 28.12.2016].
14. Gismar A. M. (2009) Partnership Governance Index in Indonesia. [Online] Available from: <http://www.gaportal.org/resources/detail/partnership-governance-index-in-indonesia-ppt> [Accessed 28.12.2016].
15. GOFORGOOD (2009) “Good Governance for Local Development – GOFORGOLD Index” [Online]. Available from: <http://www.gaportal.org/resources/detail/good-governance-for-local-development-goforgold-index> [Accessed 14.04.2017].
16. GSDRC (2010) Helpdesk Research Report: Local Government Capacity and Leadership in Fragile Areas. [Online] Available from:  
<http://www.gsdrcc.org/docs/open/hd714.pdf> [Accessed 21.06.2017].
17. Kemitraan – Partnership (n.d.) “The Partnership for Governance Reform in Indonesia” [Online]. Available from: <http://www.kemitraan.or.id/our-history> [Accessed 14.04.2017].

18. LGB (2007) Measuring and Strengthening Local Governance Capacity: The Local Governance Barometer. [Online] Available from: [http://pdf.usaid.gov/pdf\\_docs/PNADK250.pdf](http://pdf.usaid.gov/pdf_docs/PNADK250.pdf) [Accessed 28.12.2016].
19. UNDP (2009) A Users' Guide to Measuring Local Governance. [Online] Available from: [http://www.undp.org/content/undp/en/home/librarypage/democratic-governance/local\\_governance/a-users-guide-to-measuring-local-governance.html](http://www.undp.org/content/undp/en/home/librarypage/democratic-governance/local_governance/a-users-guide-to-measuring-local-governance.html) [Accessed 28.12.2016].
20. USAID, Bloom E., Sunseri A. and Leonard A. (2007) Measuring and Strengthening
21. Virola R. A., Agtarap K. F. S., Villanueva P. C., and Villaruel M. L. C. (2016) "*The 2016 Elections and Good Governance Index: Performance, Promises, or Political Dynasties*" Paper presented during the 13th National Convention on Statistics held on 3-4 October, EDSA Shangri-la Mandaluyong City, Philippines.
22. Virola, R. (2006) "*Empowering And Challenging Voters Through Governance Indicators: The Philippine Experience*". Paper presented in the session on "The Construction and Use of Indicator Sets: Lessons to Build Modern Democracies" during the OECD's 2nd World Forum on Statistics, 27 -30 Istanbul, Turkey. [Online]. Available from: <http://www.oecd.org/dataoecd/48/22/38799205.pdf?contentId=38799206> [Accessed 14.04.2017].
23. Virola, R.A., S.B. de Costo, J.M. Addawe, & L.G. Reyes (2004) "*The Best and Worst Provinces in the Philippines: What Happened to Their Leaders in the 2004 Elections?*" Convention Papers, Volume 1, pp. 17-46, 9th National Convention on Statistics, 4-5 October, EDSA Shangri-La Mandaluyong City, Philippines.
24. Wholey, Hatry and Newcomer (2015) "*Handbook of Practical Program Evaluation*". CRC press.

## ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

